Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 20.10.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Աթանեսյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա.Դունամալյանի
Պ. Թադևոսյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 2-րդ, 14-րդ, հարցերը:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 2

Հավակնորդը 2-րդ հարցին տված իր պատասխանը հիմնավորել է իր սուբյեկտիվ ընկալումներով, մասնավորապես հղում տալով իր տեսողական հիշողությանը, ինչը չի կարող հիմք հանդիսանալ ընտրված սխալ տարբերակը ճիշտ համարելու համար:

Հարց 14

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասով և հավակնորդի կողմից ընտրվել է ակնհայտ սխալ պատասխան:

Ո Ր Ո Շ Ե Տ

Թիվ 2918 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Պ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Created With Tiny Scanner